ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանին Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ) գործուղման արդյունքների վերաբերյալ

Գործուղված պաշտոնատար անձ՝ Վիգեն Քոչարյան:

Գործուղվող անձի զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:

Գործուղման վայրը և ժամկետները՝ Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ), 2017թ. հունիսի 28-ից 30-ը:

Հրավիրող կողմը՝ Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտե:

Գործուղման նպատակը՝ Մասնակցություն Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի (CEPEJ) 29-րդ լիագումար նիստին:

Քննարկված թեմաները՝ Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների դատական համակարգերի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլեր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

2017թ. թվականի հունիսի 29-ից 30-ը Ստրասբուրգ քաղաքում (Ֆրանսիայի Հանրապետություն) կայացել է Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի (CEPEJ) 29-րդ լիագումար նիստը, որին մասնակցել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը:

Լիագումար նիստի ընթացքում քննարկվելու են Եվրոպայի խորհրդի անդամ-պետությունների դատական համակարգերի արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերը, մասնավորապես՝ դատարաններում տեղեկատվական

տեխնոլոգիաների կիրառմանն առնչվող հարցեր, տեղեկատվության հրապարակման և հաղորդակցության ռազմավարության մշակմանը, դատական գործընթացներին առնչվող տեղեկությունների տրամադրման դյուրացմանը, ինչպես նաև դատական գործերի բաշխման արդյունավետության բարձրացմանն ուղված միջոցները:

Լիագումար նիստի մասնակիցները ողջունել են Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի շրջանակներում իրականացվող շարունակական համագործակցությունը, մասնավորապես դատական տվյալների հավաքագրման նոր էլեկտրոնային համակարգի ներդրումը (CEPEJ-COLLECT), որը հնարավորություն է ընձեռում գործնականում կիրառել Կոմիտեի մեթոդաբանությունը և գործիքները: Նիստի ընթացքում Կոմիտեի անդամներին ներկայացվել է դատական տվյալների հավաքագրման ու գնահատման նոր համակարգը, որը ստեղծվել է Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի կողմից:

Լիագումար նիստի ընթացքում Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի անդամների կողմից ուսումնասիրվել է 2016-2018թթ. գնահատման շրջանակի օրացույցը:

Մասնակիցների կողմից հաստատվեց հաշտարարության հարցերով աշխատանքային խմբի (CEPEJ-GT-MED) գործունեության վերսկսումը:

Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի անադմները կարևորել են Կոմիտեի աշխատանքային խմբերի (արդարադատության համակարգերի գնահատման, արդարադատության որակի, ժամանակի կառավարման (SATURN)) կողմից իրականացվող գործունեության արդյունավետության բարձրացումը:

ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վիգեն Քոչարյանը Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական կոմիտեի (CEPEJ) 29-րդ լիագումար նիստի ընթացքում ներկայացրել է ՀՀ դատական համակարգի բարելավմանն ուղղված 2016-2017թթ. ընթացքում իրականացված միջոցառումների

արդյունքները, մասնավորապես, անդրադարձ է կատարվել Վենետիկի հանձնաժողովում փորձաքննության փուլում գտնվող ՀՀ դատական նոր օրենսգրքի հիմնական կարգավորումներին: